## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

## ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/68 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **11 դեկտեմբերի 2024թ.**

2024թ դեկտեմբերի 11-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ, ք. Երևան Օրբելի եղբայրների 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ սնուցման սարքի ձեռքբերման ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/68 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Հ. Սարգսյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, |
| Հ. Խաչատրյան՝ | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի մեքենայական ուսուցման խմբի ղեկավար, |
| Պ. Վարդերեսյան՝ | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Հ. Սարգսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Ընթացակարգի շրջանակում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կայացրած վճռի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին մասին:

### 1. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՎՃՌԻ և ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովին տեղեկացրեց, որ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/68 ծածկագրով գնման ընթացակարգի

շրջանակում ներկայացվել է հայցադիմում, որի շրջանակում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 2024թ-ի դեկտեմբերի 3-ի Գործ թիվ ԵԴ2/7433/02/24 վճռի համաձայն՝ հարկավոր է ամբողջությամբ անվավեր ճանաչել 26.08.2024թ.-ի Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/68 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի՝ «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու, գնման ընթացակարգը չկայացած համարելու վերաբերյալ որոշումը, ինչպես նաև անվավեր ճանաչել «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/68 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի՝ 2024 թվականի օգոստոսի 26-ին կայացված «Աննարկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ որոշումը համարել անվավեր:

3. Դիմել ՀՀ ԿԳՄՍ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարին առաջարկելով «Աննարկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը չեղյալ անելու համար:

Հանձնաժողովը արձանագրեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 27.06.2024թ-ին հրապարակված Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար սնուցման սարքի ձեռքբերման նպատակով ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/68 ծածկագրով ընթացակարգի հրավերում ապրանքի մատակարարման վերջնաժամկետ նշված է «Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մատակարարումն իրականացվելու է մինչև 15.12.2024թ, ...», հետևաբար սահմանված ժամկետներում իրատեսական չէ պայմանագրի կնքումը, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք/) 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը սահմանվում է անգործության, իսկ Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջների համաձայն պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը, ընդ որում պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող չորրորդ աշխատանքային օրը: Միաժամանակ, ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/68 ծածկագրով ընթացակարգով նախատեսված սնուցման սարքի ձեռքբերման համար ֆինանսական միջոցները նախատեսված են 2024 թվականի պետական

բյուջեով ուստի և չի մնում այլ տարբերակ, քան ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովը որոշեց.

**1.** Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-ին ենթակետով սահմանված պահանջները:

**2.** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Հ. Սարգսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Հ. Խաչատրյան ____________

Պ. Վարդերեսյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ____________